Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 17
7. ԱՄՓՈՓՈՒՄ 18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը, ինչպես և սպասվում էր, կտրուկ դանդաղել է 2024թ. նոյեմբերին՝ հիմնականում պայմանավորված նախորդ տարվա վերջին ամիսներին աճի տեմպն էականորեն արագացրած գործոնների չեզոքացմամբ: Մասնավորապես, **նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկու վերաարտահանման ծավալների կտրուկ աճը, գրանցվելով որպես ներքին արտադրանք, հանգեցրել էր նաև տնտեսական ակտիվության աճի արագացմանը: Ընթացիկ տարում, վերաարտահանման ծավալները մի կողմից էականորեն նվազել են, մյուս կողմից դրանց ավելի քիչ մասն է գրանցվում որպես հայկական արտադրանք, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) էականորեն դանդաղել է:** Այսպես, նոյեմբերին ՏԱՑ-ը կազմել է 1.2%՝ հոկտեմբերի համեմատ դանդաղելով 3.0 տոկոսային կետով, իսկ հունվար-նոյեմբեր ամիսներին կազմել է 7.4%՝ դանդաղելով 0.7 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %[1]



2024թ. հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի աճով, որի նպաստումը կազմել է շուրջ 7.7 տոկոսային կետ: Արդյունաբերության նպաստումն էականորեն փոքրացել է՝ հասնելով 1.6 տոկոսային կետի՝ հունվար-հոկտեմբերի 2.5-ի փոխարեն: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.5 և 0.7 տոկոսային կետով:

[1] Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-նոյեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում գրանցվել է կտրուկ անկում: Նույնպես պայմանավորված նախորդ տարվա մեծ բազայի առկայությամբ՝ արդյունաբերության ոլորտում գրանցվել է 19.0% անկում: Կուտակային՝ հունվար-նոյեմբեր ամիսների աճը դանդաղել է՝ հասնելով 7.6%-ի՝ հունվար-հոկտեմբերի 11.7%-ի դիմաց: Դանդաղման պատճառը ոսկու վերաարտահանման (որը գրանցվում էր որպես տեղական արտադրանք և ներառվում արդյունաբերությունում) նվազումն է:

Արդյունաբերության հունվար-հոկտեմբեր[2] ամիսների աճը (11.7%) հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության աճով, որի տեմպը, սակայն, շարունակել է դանդաղել: 2024թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին մշակող արդյունաբերության աճը կազմել է 17.3% հունվար-սեպտեմբերի 18.9%-ի փոխարեն և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 11.7 տոկոսային կետով, մինչդեռ հունվար-սեպտեմբերի նպաստումը կազմել էր 12.6 տոկոսային կետ: Արդյունաբերության աճին նպաստել են նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտների աճերը՝ համապատասխանաբար 1.5 և 0.1 տոկոսային կետով:

Հանքարդյունաբերության ոլորտում շարունակում է գրանցվել անկում: Հունվար-հոկտեմբերին անկումը կազմել է 8.1%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.5 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճը շարունակում է պայմանավորված լինել «հիմնական մետաղների արտադրություն» գործունեությամբ, առանց որի մշակող արդյունաբերության աճը կլիներ գրեթե զրոյական: Մասնավորապես, «հիմնական մետաղների արտադրություն» ենթաոլորտը հունվար-հոկտեմբերին աճել է 2.9 անգամ՝ մշակող արդյունաբերությանը նպաստելով 17.1 տոկոսային կետով, իսկ ընդհանուր արդյունաբերությանը՝ 11.6 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «սննդամթերքի արտադրություն», «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են համապատասխանաբար 1.2-ական և 0.7 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաոլորտներ շարունակում են անկում ապրել: Մասնավորապես, էական են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «խմիչքի արտադրություն» և «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» ենթաճյուղերի բացասական նպաստումները, որոնք միասին կազմել են 2.6 տոկոսային կետ:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի, արդյունաբերության աճը հունվար-հոկտեմբերին կկազմեր շուրջ 0.1%:

[2] Արդյունաբերության նոյեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը շարունակում է դանդաղել: 2024թ. նոյեմբերին շինարարության աճը կազմել է 11.6%՝ հոկտեմբերի համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների աճը՝ 14.9%՝ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Շինարարության աճը շարունակում է պայմանավորված լինել բնակելի գույքի շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների աճի տեմպը բավական տատանողական է վերջին ամիսներին: 2024թ. նոյեմբերին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 10.4%՝ 5.2 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում

ծառայությունների աճը հունվար-նոյեմբերին նույնպես արագացել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 6.3%:

Ըստ հունվար-հոկտեմբեր[3] ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը հիմնականում պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտով, որի աճը կազմել է 21.2%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.6 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում ունեցել ոլորտի աճին, բացի ՏՏ և տրանսպորտի ոլորտներից, որոնք շարունակել են նվազել՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով համապատասխանաբար 1.8 և 1.7 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը նույնպես դանդաղել է: Առևտրի ոլորտում նոյեմբերին գրանցվել է 11.5% աճ, որը 2.2 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից: Հունվար-նոյեմբեր ամիսներին առևտրի աճը կազմել է 18.0%՝ հունվար-հոկտեմբերի համեմատ դանդաղելով 0.8 տոկոսային կետով:

[3] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[4]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանումը կտրուկ նվազել է: 2024թ. նոյեմբերին արտահանումը նախորդ տարվա նոյեմբերի համեմատ նվազել է 35.0%-ով, ինչի արդյունքում դանդաղել է նաև կուտակային աճը՝ հունվար-նոյեմբերին կազմելով 73.9%՝ հունվար-հոկտեմբերի 95.1%-ի դիմաց: Արտահանման ծավալների անկումը, ինչպես և ՏԱՑ-ի դեպքում, պայմանավորված է նախորդ տարվա բարձր բազայի առկայությամբ:

2024թ. հունվար-հոկտեմբեր[5] ամիսներին արտահանման աճը շարունակել է գրեթե ամբողջությամբ պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանմամբ, որն աճել է շուրջ 5.4 անգամ՝ արտահանման աճին նպաստելով 101.6 տոկոսային կետով (նախորդ ամսվա նպաստումը՝ 113.5 տոկոսային կետ):

Արտահանման աճին դրական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 3.6 տոկոսային կետ: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով աճին նպաստումներն ավելի փոքր կամ բացասական են:

Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու

---

[4] Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[5] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

վերաարտահանման) ընդհանուր արտահանման անկումը հունվար-հոկտեմբերին կազմում է 6.6%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման ծավալը նույնպես նվազել է: 2024թ. նոյեմբերին ներմուծումը նվազել է 21.4%-ով՝ նույնպես պայմանավորված ոսկու վերաարտահանման՝ նախորդ տարվա համեմատ ավելի փոքր ծավալներով: Արդյունքում հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման աճի տեմպը դանդաղել է՝ հասնելով 41.5%-ի՝ հունվար-հոկտեմբերի համեմատ նվազելով 9.6 տոկոսային կետով:

2024թ. հունվար-հոկտեմբեր ամիսների[6] տվյալներով՝ ներմուծման աճը ևս առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 5.1 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 56.1 տոկոսային կետով:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբի աճերը, որոնք ներմուծման աճին նպաստել են ընդհանուր առմամբ 2.1 տոկոսային կետով:

Ներմուծմանն էական բացասական նպաստում է ունեցել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի գծով ներմուծման 51.0% անկումը՝ ներմուծման աճին հակազդելով 8.2 տոկոսային կետով:

[6] Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստումը հաշվի առնելու, ներմուծման ծավալները հունվար-հոկտեմբերին նվազել են 5.3 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

Աշխատավարձի աճի տեմպը մնում է ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.4%-ով (հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղել է 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 279,857 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.3%-ով (հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղել է 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 304,702 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 217,499 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.5%-ով (հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղել է 0.3 տոկոսային կետով):

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-հոկտեմբերին, %



[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ արժեզրկվել է: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2024թ. նոյեմբերին կազմել է 389 դրամ՝ փոքր-ինչ արժեզրկվելով հոկտեմբերի 387-ի համեմատ: Նոյեմբերի վերջի դրությամբ, սակայն, վերջինս հասել է 394.6 դրամի՝ հոկտեմբերի վերջի համեմատ արժեզրկվելով 1.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տարածաշրջանային զարգացումներով՝ ՌԴ ռուբլու և տարածաշրջանի երկրների փոխարժեքների արժեզրկմամբ: Ընթացիկ տարվա ընթացքում՝ հունվար-նոյեմբեր ամիսներին, ՀՀ

դրամը եղել է արժեզրկված ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 0.3% և 0.6%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը տարվա ընթացքում եղել է արժևորված, որի չափն աստիճանաբար նվազել է՝ հունվար-նոյեմբերին կազմելով 9.1%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[8]

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը փոքր-ինչ աճել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-նոյեմբերին կազմել են 2,268.9 մլրդ դրամ՝ աճելով 7.0%-ով և հունվար-հոկտեմբերի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-նոյեմբերին կազմել է 7.1%՝ հունվար-հոկտեմբերի համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 6.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհներն աճել են շուրջ 2.4 անգամ (12.1 մլրդ դրամով):

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-նոյեմբերին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 9.5%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ 75.7%) և շահութահարկի (աճը՝ 5.3%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.6, 1.7 և 0.8

[8] ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից, 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:

տոկոսային կետ: ԱԱՀ-ի գծով մուտքերի բացասական դինամիկան մեղմվել է, և հունվար-նոյեմբերին ԱԱՀ-ի անկումը կազմել է 0.1%, իսկ նպաստումն ընդհանուր հարկային եկամուտներին եղել է զրոյական:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-նոյեմբեր		2024թ. հունվար-նոյեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**14.7**	**14.7**	**7.1**	**7.1**
Ավելացված արժեքի հարկ	13.8	4.7	-0.1	0.0
Ակցիզային հարկ	16.2	1.0	1.1	0.1
Շահութահարկ	43.0	4.9	5.3	0.8
Պետական տուրք	-40.4	-2.3	19.5	0.6
Մաքսատուրք	34.5	1.0	1.7	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-43.8	-2.0	75.7	1.7
Այլ հարկեր	31.2	0.9	10.9	0.4
Շրջանառության հարկ	27.6	0.6	17.2	0.4
Եկամտային հարկ	17.1	4.5	9.5	2.6
Սոցիալական վճարումներ	41.7	1.4	14.7	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը փոքր-ինչ դանդաղել է՝ պայմանավորված կապիտալ ծախսերի աճի դանդաղմամբ: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-նոյեմբերին կազմել են 2,501.1 մլրդ դրամ՝ աճելով 14.5%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 1.8 տոկոսային կետով): Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 14.8%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 12.6 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպն էականորեն դանդաղել է՝ հունվար-նոյեմբերին կազմելով 12.8%՝ հունվար-հոկտեմբերի 28.7%-ի համեմատ:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդը շարունակել է մեծանալ: 2024թ. հունվար-նոյեմբերին պետական բյուջեի ծախսերն էականորեն գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 232.2 մլրդ դրամի չափով պակասուրդ: Վերջինս, սակայն, դեռ հեռու է բյուջեով տարվա համար սպասվող պակասուրդի մեծությունից:

5.4. Պետական պարտք

2024թ. նոյեմբերին ՀՀ պետական պարտքի ծավալը շարունակել է աճել: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 12.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճելով 12.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.6%): Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 12.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 13.1%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.5%):

Պարտքի աճը պայմանավորված է ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 27.3% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է մնալ նախորդ տարվա համեմատ ցածր՝ շուրջ 0.7%-ով:

2024թ. նոյեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազման միտումը շարունակվել է: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքները (եկամտաբերությունը) նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ նվազել են փոքր չափով՝ 0.1 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը մնացել է նույն մակարդակում: Նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 1.7 և 1.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճը, %



Գնաճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Արագացումը տեղի է ունեցել նոյեմբերին՝ հասնելով 1.4 տոկոսային կետի՝ պայմանավորված սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գների աճի արագացմամբ: Կենտրոնական բանկը դեկտեմբերի 10-ին նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը՝ հասցնելով այն 7.0%-ի:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %





Ավանդների ծավալի աճի տեմպը վերջին ամիսներին որոշակիորեն կայունացել է: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. նոյեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.0%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ աճի տեմպը որոշակիորեն արագացել է՝ կազմելով 8.9%՝ նախորդ ամսվա 6.4%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է հիմնականում ռեզիդենտների ավանդների շուրջ 13.0% աճով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին 2024թ. նոյեմբերին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 5.3 տոկոսային կետով: Էական է եղել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով շուրջ 13.1%, ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.0 տոկոսային կետով:

6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը նույնպես կայունացել է: 2024թ. նոյեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.7%-ով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալի աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 19.5%:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %





Վարկերի աճը տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 24.5%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 23.2 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտների վարկերը նվազել են շուրջ 27.9%-ով՝ ընդհանուր վարկերի աճին հակազդելով 1.5 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ոչ ռեզիդենտների և՛ դրամային, և՛ արտարժութային վարկերի նվազմամբ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ տնային տնտեսություններին, և՛ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 25.3% և 23.7%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 12.5 և 12.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ[9]



Նոյեմբերին վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել հիպոթեքային (աճը՝ 30.6%) և սպառողական (աճը՝ 25.8%) վարկերի աճերը՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 6.5 և 5.6 տոկոսային կետով: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճել են բոլոր ճյուղերում, այդ թվում՝ արդյունաբերության ոլորտում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար[10]



[9] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

[10] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2024թ. նոյեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի ծավալները մեծացել են, սակայն նախորդ տարվա համեմատ մնում են ցածր մակարդակում: 2024թ. հոկտեմբերին դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է ընդամենը 160 մլն ԱՄՆ դոլար, ինչը բավական բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ներհոսքը կազմել է 1,048.0 մլն ԱՄՆ դոլար՝ շուրջ 28.0%-ով ցածր լինելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,455.8 մլն ԱՄՆ դոլարից:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպն էականորեն դանդաղել է, ինչը և սպասելի էր: Նախորդ տարվա բարձր աճ ապահովող գործոնները չեզոքացել են, ինչի արդյունքում տնտեսական ակտիվության աճի տեմպը դանդաղել է: Նույն գործոններով պայմանավորված՝ դեկտեմբերի աճը ևս բավական ցածր կլինի: **Նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկու վերաարտահանման ծավալների կտրուկ աճը, գրանցվելով որպես ներքին արտադրանք, հանգեցրել էր նաև տնտեսական ակտիվության աճի արագացմանը: Ընթացիկ տարում, վերաարտահանման ծավալները մի կողմից էականորեն նվազել են, մյուս կողմից դրանց ավելի քիչ մասն է գրանցվում որպես հայկական արտադրանք, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) էականորեն դանդաղել է:**

2. Արդյունաբերության, արտահանման և ներմուծման ցուցանիշները անկում են գրանցել: Սա նույնպես պայմանավորված է ոսկու վերաարտահանման գործունեության ծավալների նվազմամբ: Միևնույն ժամանակ, ինչպես արդյունաբերության, այնպես էլ արտահանման կառուցվածքում, բացի վերոհիշյալից, մյուս հատվածները նույնպես դրսևորում են ցածր աճեր կամ անկումներ, ինչը մտահոգիչ է՝ հաշվի առնելով, որ դա կարող է հանգեցնել տնտեսության ներուժի նվազման:

3. Մակրոտնտեսական ցուցանիշները կարող են շեղվել կառավարության կողմից կանխատեսված մակարդակներից: ՏԱՑ-ի՝ նման ցածր ցուցանիշների պայմաններում, տնտեսական աճը տարեվերջին կարող է լինել շատ ավելի ցածր, քան 5.8%-ը, որը դրված է 2025թ. բյուջեի հիմքում: Բացի այդ, կանխատեսումներից ցածր կարող է լինել նաև գնաճը, որը նույնպես նոյեմբերի դրությամբ բավական ցածր մակարդակում է: Այս պայմաններում, վտանգվում է հաջորդ՝ 2025թ. բյուջեի սցենարը:

4. Տնտեսական ակտիվության դանդաղման պայմաններում տնային տնտեսությունների վարկերի ծավալները աճում են բարձր տեմպերով: Տնտեսական ակտիվության աճը, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձերի աճի տեմպը բավական ցածր է վարկերի աճերի համեմատ: Մասնավորապես, սպառողական և հիպոթեքային վարկերի աճերը կազմում են համապատասխանաբար 30.6% և 25.8%, ինչը անգամներով գերազանցում է բնակչության եկամուտները բնութագրող բոլոր ցուցանիշների աճերին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: